

**5.4. 2009թ. նոյեմբեր ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մոնիթորինգ**

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության շրջակա բնական միջավայրը 2009թ. նոյեմբերին ունեցել է հետևյալ բնութագիրը.

**Օդային ավազանի որակի մոնիթորինգ:** Նոյեմբերին հանրապետության մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգ իրականացվել է Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի և Արարատ քաղաքներում տեղակայված 12 մշտական լաբորատոր դիտակայանների, Երևան, Արարատ, Ալավերդի, Վանաձոր, Գյումրի, Հրազդան, Ծաղկաձոր, Վաղարշապատ, Աբովյան, Սևան, Գավառ, Կապան և Քաջարան քաղաքների պասիվ նմուշառման 228 դիտակետերի, Ամբերդ գյուղում տեղադրված ավտոմատ կայանի միջոցով:

Մթնոլորտային օդի 4085 փորձանմուշներում որոշվել են հիմնական աղտոտիչ նյութերի՝ փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ազոտի օքսիդի, գետնամերձ օզոնի, բենզոլի, տոլուոլի և քսիլոլի պարունակությունները:

**Մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգի անցկացման համար տեղակայված դիտակայանների, դիտակետերի և վերցված փորձանմուշների քանակական քաշիվածությունն ըստ քաղաքների, 2009թ. նոյեմբեր**

(միավոր)

	Դիտակայանների		Դիտակետերի	
	քանակը	փորձանմուշների քանակը	քանակը	փորձանմուշների քանակը
Երևան	4	1352	43	204
Արարատ	1	75	12	40
Ալավերդի	2	280	18	174
Վանաձոր	3	800	24	139
Գյումրի	1	25	24	233
Հրազդան	1	75	12	118
Ծաղկաձոր	-	-	14	140
Վաղարշապատ	-	-	16	81
Աբովյան	-	-	12	211
Սևան	-	-	10	29
Գավառ	-	-	14	51
Կապան	-	-	20	40
Քաջարան	-	-	9	18
<b>Ընդամենը</b>	<b>12</b>	<b>2607</b>	<b>228</b>	<b>1478</b>

Երևան քաղաքի մթնոլորտային օդում հոկտեմբեր ամսվա համեմատ ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.2 անգամ:

**Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաներն ու դրանց սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՄԹԿ) ք.Երևանի մթնոլորտային օդում, 2009թ. նոյեմբեր**

(մգ/մ<sup>3</sup>)

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները		ՄԹԿ-ները	
	առավելագույն	միջին ամսական	միանվագ առավելագույն	միջին օրական
Փոշի	0.59	0.12	0.5	0.15
Ծծմբի երկօքսիդ	0.13	0.04	0.50	0.05
Ազոտի երկօքսիդ	0.323	0.120	0.085	0.04
Ազոտի օքսիդ	0.32	0.04	0.40	0.06
Գետնամերձ օզոն	0.090	0.060	0.16	0.03
Բենզոլ	0.198	0.029	1.5	0.1
Տոլուոլ	0.047	0.002	0.6	0.6
Քսիլոլ	0.615	0.022	0.2	0.2

**5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ**

Նոյեմբեր ամսից Երևան քաղաքի պասիվ նմուշառման 43 դիտակետերի միջոցով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները:

Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.9 անգամ: Հոկտեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի էական փոփոխություն չի դիտվել:

Գյումրի քաղաքի պասիվ նմուշառման 12 դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 4.0 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 1.1 անգամ:

Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում հոկտեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.3 անգամ:

**Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաներն ու դրանց ՍԹԿ-ները ք.Վանաձորի մթնոլորտային օդում, 2009թ. նոյեմբեր**

(մգ/մ<sup>3</sup>)

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները		ՍԹԿ-ները	
	առավելագույն	միջին ամսական	միանվագ առավելագույն	միջին օրական
Փոշի	-	0.38	0.5	0.15
Ծծմբի երկօքսիդ	0.77	0.12	0.50	0.05
Ազոտի երկօքսիդ	0.240	0.045	0.085	0.04
Ազոտի օքսիդ	0.15	0.03	0.40	0.06

Նոյեմբերի 9-ից Վանաձոր քաղաքի պասիվ նմուշառման 24 դիտակետերի միջոցով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 3.4 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 1.5 անգամ:

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.0 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 2.1 անգամ:

Հրազդան քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 4.5 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 2.0 անգամ:

Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում հոկտեմբեր ամսվա համեմատ որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխություն չի դիտվել:

**Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաներն ու դրանց ՍԹԿ-ները ք.Ալավերդու մթնոլորտային օդում, 2009թ. նոյեմբեր**

(մգ/մ<sup>3</sup>)

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները		ՍԹԿ-ները	
	առավելագույն	միջին ամսական	միանվագ առավելագույն	միջին օրական
Փոշի	-	0.10	0.5	0.15
Ծծմբի երկօքսիդ	0.57	0.51	0.50	0.05
Ազոտի երկօքսիդ	0.057	0.052	0.085	0.04
Ազոտի օքսիդ	0.05	0.04	0.40	0.06

Նոյեմբեր ամսից Ալավերդի քաղաքի պասիվ նմուշառման 18 դիտակետերի միջոցով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները:

Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.9 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 5.1 անգամ: Հոկտեմբեր ամսվա համեմատ ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.4 անգամ:

Նոյեմբեր ամսից Արարատ քաղաքի պասիվ նմուշառման 12 դիտակետերի միջոցով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 5.5 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 2.6 անգամ:

Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 10.9 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 3.3 անգամ:

Նոյեմբեր ամսին Վաղարշապատ, Աբովյան, Սևան, Գավառ, Կապան և Քաջարան քաղաքների պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Վաղարշապատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 4.6 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 1.1 անգամ: Աբովյան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 4.8 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 1.4 անգամ: Սևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 2.7 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 1.5 անգամ: Գավառ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 3.0 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 1.2 անգամ: Կապան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 6.9 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 1.8 անգամ: Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից ցածր է եղել 9.3 անգամ, ազոտի երկօքսիդինը՝ 2.6 անգամ:

Նոյեմբեր ամսին ֆոնային կոնցենտրացիաների որոշման նպատակով Ամբերդ գյուղում ավտոմատ եղանակով վերցվել է օդի 90 և փոշու 30 փորձանմուշ: Օդի փորձանմուշներում որոշվել են ազոտի երկօքսիդի, ծծմբի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլոր, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 31 քիմիական տարրերի պարունակությունները: Մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի որոշման համար կատարվել է նաև 839 դիտարկում: Գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 2.5 անգամ, իսկ ազոտի երկօքսիդինը և ամոնիակինը՝ նվազել, համապատասխանաբար՝ 13.8 և 80.0 անգամ:

Ամբերդ գյուղի ավտոմատ կայանի հարակից տարածքի տեղումներում վերահսկվող նյութերի պարունակությունը, 2009թ. նոյեմբեր

(մգ/դմ<sup>3</sup>)

Նմուշների վերցման ամսաթիվը	Ցուցանիշներ					տեսակարար էլեկտրահաղորդականություն, $\mu\text{S}/\text{սմ}$
	ջրածնային ցուցիչ	նիտրատ իոն	սուլֆատ իոն	քլորիդ իոն	ամոնիակ	
01-02	6.78	0.354	0.52	0.46	1.07	23
02	7.17	0.258	0.69	0.49	1.05	50
03	7.06	0.280	0.37	0.89	0.86	39
05	7.06	0.572	1.11	2.31	0.84	62
14	6.81	-	-	-	0.62	21
20	6.89	-	-	-	1.13	44

**Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ:** 2009թ. նոյեմբերին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 39 գետերի, Արփիլձի, Ապարանի և Կեչուտի ջրամբարների, Երևանյան և Սևանա լճերի 101 դիտակետերում: Վերցված 110 փորձանմուշներում որոշվել է 17-22-ական ցուցանիշ:

Մակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը, 2009թ. նոյեմբեր

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները			
			ԹԿՊ <sub>5</sub> (ՍԹԿ՝ 3.0 մգ/դմ <sup>3</sup> )	ԹՔՊ (ՍԹԿ՝ 30.0 մգ/դմ <sup>3</sup> )	նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգ/դմ <sup>3</sup> )	ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգ/դմ <sup>3</sup> )
Փամբակ	4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	4.32	-	0.057	1.411
Դեբեդ	6	ք.Այրումից 0.5 կմ վերև	-	-	0.032	-
	7	ՀՀ պետական սահմանի մոտ	-	-	0.030	-
Չորագետ	8	ք.Ստեփանավանից 0.5 կմ վերև	-	-	0.038	-
Տաշիր	11	Սարատովկա գյուղից 0.5 կմ վերև	-	-	-	0.611
	12	Սարատովկա գյուղից 0.5 կմ ներքև	-	-	0.039	0.484
Ախթալա	14	Գետաբերան	-	38	-	-
Աղստև	16	ք.Իջևանից 0.5 կմ ներքև	-	-	0.028	0.524
Գետիկ	20	Գետաբերան	-	-	0.032	-
Արաքս	26	Հրազդան գետի թափման կետից վերև	-	40	-	-
	27	Հրազդան գետի թափման կետից ներքև	-	-	0.076	1.064
	28	Արմաշ գյուղից 0.5 կմ ներքև	-	-	0.114	3.163
	30	ք.Ագարակից 2.5 կմ հարավ-արևելք	3.60	-	0.065	-
Ախուրյան	34	ք.Գյումրիից 5 կմ ներքև	-	-	0.064	3.188
Կարկաչուն	38	Ղարիբջանյան գյուղից 1 կմ ներքև	-	-	0.102	2.071
Սևջուր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	-	36	0.036	-
	41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	-	-	0.069	0.482
	42	Ռանչպար գյուղից 0.5 կմ ներքև	-	-	0.065	-
Քասախ	43	ք.Ապարանից 0.5 կմ վերև	4.10	-	-	-
	44	ք.Ապարանից 0.5 կմ ներքև	3.90	-	-	3.777
	45	ք.Աշտարակից 1 կմ վերև	3.70	-	-	0.425
Գեղարոտ	49	Գետաբերան	-	-	0.029	-
Հախվերդ	50	Փարպի գյուղից 0.5 կմ ներքև	3.60	-	-	-
Հրազդան	52	Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև	3.70	36	-	-

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները			
			ԹԿՊ <sub>5</sub> (ՍԹԿ՝ 3.0 մգ/դմ <sup>3</sup> )	ԹՔՊ (ՍԹԿ՝ 30.0 մգ/դմ <sup>3</sup> )	նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգN/դմ <sup>3</sup> )	ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգN/դմ <sup>3</sup> )
	53	Արգել գյուղից 0.5 կմ ներքև	3.30	-	-	-
	55	Դարբնիկ գյուղի մոտ	3.40	-	0.127	0.829
	56	Գետաբերան	-	-	0.119	2.557
Մարմարիկ	58	Գետաբերան	4.00	-	-	-
Գետառ	59	Գետաբերան	-	-	0.195	3.600
Արփա	86	ք.Եղեգնաձորից 0.5 կմ վերև	3.30	-	-	-
	87	Արենի գյուղից 0.5 կմ ներքև	3.50	-	0.039	-
Մեղրիգետ	89	ք.Մեղրիից 0.5 կմ վերև	3.80	-	-	-
Ողջի	92	ք.Քաջարանից 1.8 կմ ներքև	5.70	-	0.045	18.118
	93	ք.Կապանից 0.8 կմ վերև	4.30	-	-	-
	94	ք.Կապանից 6.8 կմ ներքև	3.60	-	0.043	0.450
Արծվանիկ	96	Գետաբերան	3.90	-	0.092	-
Գեղի	98	Գետաբերան	3.70	-	-	-
Որոտան	99	Գորայք գյուղից 0.5 կմ վերև	3.60	-	-	-
	100	ք.Սիսիանից 1 կմ վերև	3.70	-	-	-
	101	ք.Սիսիանից 2 կմ ներքև	4.0	-	-	0.573
Գորիսգետ	106	ք.Գորիսից 3 կմ վերև	3.40	-	-	-
	107	ք.Գորիսից 1.5 կմ ներքև	4.30	-	0.142	5.074
Ապարանի ջրամբար	111	Ամբարտակի մոտ	3.60	-	-	-
Երևանյան լիճ	112	Ամբարտակից գետի հոսանքով ներքև	-	-	0.040	2.587
Կեչուտի ջրամբար	114	Ամբարտակի մոտ	3.50	-	-	-